Լեգոստարտի վարքականոնը թիմերի համար

«Կարևոր է ոչ թե հաղթելդ կամ պարտվելդ, այլ թե որքա՛ն կսովորես»:

Որպես թիմ՝ մենք հետևում ենք հետևյալ սկզբունքներին:

Մենք մասնակցում ենք մրցույթի:
Մենք սիրում ենք հաղթել և ցանկանում սովորել:
Մենք նաև խաղային հաճելի ժամանակ ենք ուզում անցկացնել:

Մենք ցանկանում ենք արդար խաղալ:
Մենք ստեղծում ենք մեր սեփական ռոբոտը և գրում մեր սեփական ծրագրակազմը:
Արդար չի լինի, եթե մի ուրիշն անի դրանք մեզ համար:

Մենք կարող ենք սովորել ինչ-որ բան, միայն երբ դա փորձում ենք ինքներս:
Մեր մարզիչը կարող է մեզ սովորեցնել և ուղղորդել:
Մեզ կարող են ոգեշնչել նաև այլ անձինք:

Սակայն մարզիչը մեր գործը պիտի չանի մեր փոխարեն:
Եվ մենք մի ուրիշից պիտի պարզապես չպատճենենք մի ռոբոտ կամ ծրագրակազմ:
Մեր գտած օրինակները մենք օգտագործում ենք մեր սեփական ռոբոտն ու ծրագրակազմը ստեղծելու համար:

Երբեմն մենք ձախողում ենք, և դա բնական է:
Ինքնատիպ գաղափարները ծնվում են ձախողումներից:
Հաղթելը լավ է, բայց պարտվելը մեր ճանապարհորդության մի մասն է:

Թիմի անուն _____

Մարզիչի անուն և ստորագրություն _____

Թիմի անդամների անուններ և ստորագրություններ _____

_____

_____

© «Այբ» կրթական հիմնադրամ, 2021

Ինչն է թույլատրելի և ինչը՝ անթույլատրելի Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայում

Թույլատրելի է	Անթույլատրելի է
Բոլոր մրցույթները	Բոլոր մրցույթները
Մենք համացանցում որոնում ենք տեղեկույթ և գաղարներին հաղորդակից դարձնում նաև այլ անձանց: Մենք օրինակներից սովորում ենք և մեր սովորածն օգտագործում մեր սեփական ռոբոտի սարքակազմը և/կամ ծրագրակազմը ստեղծելու համար:	Մենք լուծումը գնում ենք համացանցից կամ ուղղակի պատճենում մի ուրիշի ստեղծածը: Մենք այդ լուծումը (սարքակազմ և/կամ ծրագրակազմ) օգտագործում ենք մրցույթի ժամանակ:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ ծրագրավորման տարբեր խորհուրդներ է տալիս:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ համար ծրագրավորում է ռոբոտը (կամ դրա որոշ մասեր):
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է տարբեր ձևերով կառուցել այս կամ այն մասը:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ համար կառուցում է ռոբոտը (կամ դրա որոշ մասեր):
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը թույլ է տալիս, որ մե՛նք որոշենք մեր անելիքը, երբ ինչ-որ բան չի աշխատում:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ համար շտկում է չաշխատող մասերը:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը թույլ է տալիս, որ մրցույթի օրը մե՛նք լուծենք ծագող խնդիրները:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մրցույթի օրը մրցավարների հետ քննարկում է կանոնները կամ որոշումները:
Մենք ցանկանում ենք հաղթել մրցույթում, բայց ո՛չ խաբեությամբ կամ մեր փոխարեն ուրիշի կատարած աշխատանքի հաշվին:	Մենք ցանկանում ենք հաղթել մրցույթում, և կարևոր չէ, թե ինչպես:
Մենք փորձում ենք անակնկալ առաջադրանքն ինքներս կատարել, որովհետև յուրացրել ենք հիմնական նյութը և կարող ենք որպես թիմ լուծում գտնել:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը փորձում է մեզ ուղղություն տալ, թե ինչպես կատարենք անակնկալ առաջադրանքը վերջինիս հայտնի դառնալուց հետո:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ օգնում է ռոբոտի մոդելը կամ մրցույթի տաղավարը պատրաստելու ժամանակ, միայն եթե դրա կարիքը կա (օրինակ՝ եթե առարկաները շատ ծանր են, եթե կարիք ունենք նոր հմտություններ սովորելու կամ եթե ինչ-որ բան ինքնուրույն պատրաստելը խիստ վտանգավոր է մեզ համար):	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը որոշում է մեր ռոբոտի մոդելը և/կամ թե ինչ տեսք պիտի ունենա մեր տաղավարը, պատրաստում այս կամ այն բանը մեզ համար, նույնիսկ եթե մենք դրանք կարող ենք ինքներս անել:

© «Այբ» կրթական հիմնադրամ, 2021